ՆՈՐ ԳՐՔԵՐ

Г. АСЛАНЯН — «Идея прогресса в буржуазной философии истории», Издательство АН Арм. ССР, тираж 1000, 395 стр., цена 1 р. 49 к.

Книга представляет собой критический очерк буржуазных теорий относительно одной из коренных проблем философии истории — проблему общественно-исторического прогресса.

В работе есть специальная глава, где вкратце излагаются основные положения марксистско-ленинского понимания общественного прогресса.

Պ. ԿՈԿԻՆՈՍ — «Հունահայ գաղութի պատմությունից» *(1918—1927)*, *ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1500, 264 էջ, գինը՝ 90 կ.։*

Մենագրությունը նվիրված է հունահայ աշխատավորության տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի պատմությանը, հայ և հույն բանվորների համատեղ պայքարին, ինչպես նաև Հունաստանի կոմպարտիայի գործունեության ուսումնասիրությանը՝ հայ աշխատավորներին Հունաստանի հեղափոխական շարժման մեջ ընդգրկելու ուղղությամբ։

Հ. Թ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ — «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», *ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 2000, 366 էջ, գինը՝ 1 ռ. 55 կ.։*

Այս գրքում արաբերեն բնագրից թարգմանվել են 13 և 16-րդ դարերի երեք արաբ հեղինակների՝ Յակուտ ալ-Համավիի, Աբու-լ-Ֆիդայի և Իբն Շադդադի գրքերում պարունակվող այն հատվածները, որոնք հարուստ տեղեկություններ են տալիս միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու տնտեսական կյանքի պատմության տարբեր բնագավառների մասին։

Գիրքն ունի անձնանունների և տեղանունների ցանկ։

Գ. Ն. ՍԱՀԱԿՅԱՆ — «Սպառման անհատական և հասարակական ֆոնդերը», *ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, 85 էջ, գինը՝ 12 կ.։*

Գրքույկում վեր է հանված սպառման անհատական ֆոնդերի էությունը, դրանց առաջացումը պայմանավորող գործոնները և դերը վերարտադրության պրոցեսում։

Համառոտակի նշված են այն ուղիները, որոնց միջոցով պլանավորվում ու կարգավորվում է այդ ֆոնդերի բաշխումը, ինչպես նաև հատուկ գլուխ է նվիրված սպառման անհատական ֆոնդերի էության համեմատական վերլուծությանը։